Ն. Բ. ԱԼԲՈՒԹՈՎԱՆՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱԿՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԹԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ անկյունադարձային նշանակություն ունեցավ պարսկական բռնատիրությունից Արևելյան Հայաստանի ազատագրվելու և Ռուսաստանին միակցվելու իրողությունը։ 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագիրը և Հայկական մարզ ստեղծելու վերաբերյալ մարտի 21-ին Նիկոլայ առաջինի հրամանագիրը հայ ժողովուրդը դիմավորեց խանդավառությամբ։ Նշանավոր այդ իրողությունները նոր հովեր մտցրին ընթացիկ կյանքի մեջ և խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ժամանակակիցների համար։ Մի պահ թվում էր, թե ազգային տեսիլների մեջ ուրվագծվող Հայաստանին փոխարինելու էր գալիս ռեալ, շոշափելի Հայաստանը։

Ժամանակի հայ գործիչները տակավին չէին նշմարում ցարիզմի գաղութային նպատակների և իրենց ակնկալությունների անանց անդունդը։ Դեռ Երևանը գրավելուց առաջ՝ հայ ժողովրդին ազատագրական պայքարի ոգեկոչող իր հորդորներով Ն. Աշտարակեցին ցույց տվեց իր և իր ժամանակակիցների պատրանքները։ «Հայտնի է ձեզ,— կարդում ենք նրա կոչերից մեկում,— նաև Ռուսաստանի օգոստոսափառ պետության նպատակը։ Նա իր հզոր բազուկը տարածեց մեր հայրենակիցների վրա ոչ այնքան իր սեփական օգտի..., որքան մեր անզորության և բարության և Քրիստոսի սուրբ կրոնը և եկեղեցին պաշտպանելու համար»[1]։

Հայաստանի քաղաքական զարգացման համար ի՞նչ ընթացք էին ակնկալում հայ ժողովուրդը և ազատագրական շարժման նրա ղեկավարները նշանավոր դեպքերի՝ ռուս-պարսկական պատերազմական գործողությունների ժամանակ։

Հայ հոգևորականության բարձր շրջաններում և ժողովրդի ամենատարբեր հասարակախավերում տակավին հօդս չէին ցնդել հայկական ինքնավար նահանգների, ազատված եկեղեցու, քրիստոնյա հովանավորության մասին պետրոսյան և եկատերինյան պատմաշրջաններից եկող հրապուրիչ խոստումները։ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ դարավոր դժոխքը թվում էր վերացված և հայ գործիչներից շատերը իրենց խանդավառ միամտության մեջ կարծում էին, թե ցարական կներալների թևերի վրա «հայկական ինքնավարության» գաղափարներն են արշավում դեպի Պարսկաստան։

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից ցնծություն առաջ բերեց հայության բոլոր հատվածներում, այդ թվում և հնդկահայ գաղութում։ Կալկաթայում գումարված բազմամարդ ժողովում Մ. Թադիադյանը ասա էր

---

1 Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 238։

արտասանում՝ «Ի վերայ ազատության Հայոց աշխարհին»։ Նա կոչ էր անում ժողովականներին. «Եկայք եկեսցուք ի Հայաստան, համբուրեսցուք զաւարձախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց...»[2]։

Իրենց նամակում Կալկաթայի ատրպետ հայերը՝ խնդակցությունից զատ հույս էին հայտնում, որ մեկ-երկու տարի անցնելուց հետո, իրենցից շատերը կտեղափոխվեն Արարատյան երկիր և ազգակիցների հետ միասին կօգտվեն այն արտոնություններից, որից օտար երկրում զրկված են իրենք։ Հայերն այլևս հայրենիքից դուրս դեգերելու պատճառներ չունեն, քանզի մեծ Ռուսիան նրանց իր գիրկն էր հավաքագրում[3]։ Փույթ չէր ամենևին, որ Հայաստանի իսկական ազատագրության վաղեմի ծրագրերը խունանում էին ցարական դիվանների ամուր պահարաններում։ Հայ գործիչները շարունակում էին փայփայել կայուն այն բաղձանքը, թե պարսկահայերի ողբերգական ներկան ռուսական հովանավորության և խնամակալության շնորհիվ կդառնա երջանիկ ու ապահով։ Նրանք, դեռ պատերազմի եռուն շրջանում, հաղթանակի հանդեպ հավատ էին ներարկում ժողովրդի ամենալայն զանգվածներին և սուր դնում նրանց ձեռքը՝ մաճի ու մանգաղի, մուրճի ու համքարական դազգահի, արշինի ու կշեռքի փոխարեն, իսկ վարդագույն ապագայի հույսերով ոգևորված ժողովուրդը ամեն ինչ անում էր դյուրացնելու ռուս բանակների հաղթանակը։ Ն. Աշտարակեցին հավաստիացնում էր հայ կամավորներին, թե «...Ռուսիո օգոստոսափառ ինքնակալի ողորմած ուշադրությունը պսակներ կյուսեն թե ձեզ և թե բոլոր ձեր համազգիներին»[4]։ Ընդհուպ մինչև ռուս-պարսկական պատերազմի վերջը, իր ձեռքըն առած Քրիստոսի խաչն ու ցարի դրոշը, Ներսեսը ռուսական բանակներին ցույց տված իր աջակցության համար արժանացավ ոչ միայն կովկասյան բարձր հրամանատարության, այլև թագավորի համակրանքին ու վստահությանը։ Նրա և հայ մյուս գործիչների ռուսական օրիենտացիան բնավ չէր բխում լոկ ռուսահպատակ դառնալու մարմաջից կամ եկեղեցական-վարչական շահախնդրություններից։ Ն. Աշտարակեցին և Գր. Մանուչարյանը, Հ. Ալամդարյանն ու Պ. Լալայանը անդրադարձնում էին այն ակնկալությունները, որոնք առկա էին ժողովրդի ամենատարբեր ծալքերում։

1827 թ. մայիսի 15-ին, Թիֆլիսի հայկական եկեղեցիներից մեկի հրապարակում, գեներալ Սիպյագինի ղեկավարությամբ տեղի ունեցած Հայկական կամավորական գնդի երկրորդ զորահանդեսում արտասանած իր ճառում, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանն ասում էր՝ «...դրոշակ այդ, որ այսօր վերակարդալով զահաւոր անուն տեառն սրբալանս և տուաւ գնդի ձերոյ, է առհաւատչեայ սիրոյ Աստուծոյ և նորա առ ձեզ։ Պահեցեք զայս անգին աւանդ իբրև զբիբ ական»[5]։ Ընդարձակ իր ճառում Ալամդարյանը, մասնավորապես, կանգ է առնում հայ ժողովրդի պետականության կորստյան և օտար նվաճողների տիրապետության տակ ընկնելու պատմական փաստի վրա։

2 Ցուցակ վասն ամի տեառն 1829, տպագրեալ ի գործատան մարդասիրական ճեմարանի. Ի Կալկաթա, էջ 24—84։

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 63, վավ. 320։

4 Ա լ. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, նույն տեղում, էջ 248։

5 Ա լ. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 276։ (Հ. Ալամդարյանի հիշյալ ճառի հայերեն և ռուսերեն ձեռագիր օրինակները պահվում են Մատենադարանում, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 195)։

Հայ գործիչները գիտեին, որ սկսված պատերազմը նոր զոհեր էր պահանջում մայր հայրենիքում բանակապես աննշան և նյութապես աղքատ հայ ժողովրդից, բայց՝ «Այս ամեն զոհողությունները կկատարեն նոքա, որովհետև առաջուց խոստումն ընդունած էր Ռուսիո տերութենեն, որ հաջողութենեն հետո Հայոց ազգն ազատ պիտի լինի և անկախ իշխանություն պիտի ունենա Արարատյան գավառի մեջ»[6]:

Հայոց թագավորների և իշխանների տարեգրության ձեռագիր իր աշխատության առաջաբանում Գեորգ Խուբովը՝ Երևանի գրավման ժամանակ ծնված թագաժառանգ Կոնստանտին Նիկոլայևիչի հետ էր կապում հայկական թագավորության վերականգնման ժամանակակիցների բաղձանքները[7]: Թուրքական տիրապետությունից ազատագրվելու ցանկությամբ էր տոգորված և արևմտահայությունը: Ալ. Երիցյանը պատմում է, որ Թուրքիայում «...հավանական էին թվում Պոլսո մեջ պտտած լուրերը, որ իբր թե Ռուսիան մտադիր է՝ Հայոց թագավորություն հռչակելու մտքով՝ խլել նաև Տաճկական Հայաստանը»[8]:

Դեպի Անդրկովկաս առաջխաղացող ցարիզմը սահմանամերձ երկրներում աջակիցներ ու համակիրներ հավաքագրելու իր տրադիցիոն քաղաքականության համապատասխան, հայ ժողովրդին դիտում էր այն ուժերից մեկը, որ կարող էր որոշակի նպաստ բերել նվաճողական իր ծրագրերին: Սակայն XIX դարեմուտից և, մասնավորապես, նապոլեոնյան բանակների ջախջախման ավարտից ու «սրբազան դաշինքի» ոգեշնչողի դերը ստանձնելուց հետո, ցարիզմն ընդմիշտ փակված էր համարում հայ-ռուսական քաղաքական սիրախաղի հին շրջանը: Խոստացողի ու հուսադրողի երբեմնի իր գործելակերպից չհրաժարվելով, նա այժմ էլ ջանում էր կազմակերպել աղերսներով իր օգնությունը հայցող քրիստոնյաների ուժը տերիտորիալ նոր վիրահատումների համար, այն տարբերությամբ միայն, որ Ռուսաստանի հովանավորության ներքո «հայկական թագավորության» կամ «ինքնավարության» փոխարեն հայերը պիտի բավարարվեին կայսերահպատակ դառնալու մեծագույն շնորհով: Ինչպես 1800-ական թվականների ըմբոստ վրացիները, այնպես էլ 1820-ական թվականների հայ գործիչները տակավին հասու չէին այն գիտակցության, որ առկա քաղաքական պայմաններում մնում էր միայն հոժարել սեփական թագավորական ռեժիմն ու շահնշահի տիրապետությունը ցարականով փոխարինելու մտքի հետ: Մի կողմ վանելով պատմության փորձը, գաղափարապաշտ ազգային այդ գործիչները ձգտում էին գտնել այն, ինչ կորցրել էին վրացիները երեք տասնամյակ առաջ: Հայ կամավորները մարտնչում էին Երևանի, Նախիջևանի, Էջմիածնի, հայկական յուրաքանչյուր գյուղի համար, և նրանցից ամեն մեկը երևակայում էր, թե հաղթանակի կամ պարտության պատճառը իր զենքն է: Մինչդեռ կամավորների գոտեմարտը՝ արտացոլումը չէր այն պայքարի ու նպատակի, որ նրանց գլխավերևում մղում էին ռուս ցարն ու գեներալները հայ ժողովրդի ճակատագիրը որոշելու համար: Կույր հավատի ու միամտության պահերը դեռ չէին անցել: Հետագա իրադարձությունների լույսի տակ միայն հայ գործիչները կարողացան զանազանել ցարական խոստումների դրական և բա-

6 Նույն տեղում, էջ 242:

7 Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 3755:

8 Ալ. Երիցյան, նույն տեղում, էջ 358:

յաստական նրանգները, ըմբռնել քրիստոնեասիրական լոզունգների գործնական իմաստը։

Ռուս-պարսկական պատերազմի վերջին պահերին, և առանձնապես այն ավարտելուց հետո, Պասկևիչը միջոցների խտրություն չէր դնում երկրամասից վտարելու նշանավոր հայ գործիչներին։ Ն. Աշտարակեցու գործունեությունը Անդրկովկասում դիտվեց այլևս ավելորդ, քանզի «նա իր դերն արդեն կատարել էր Ռուսաց քաղաքականության նկատմամբ...»[9]։

Ն. Աշտարակեցու հետ իր հաշիվները մաքրելուց հետո, Պասկևիչը դավեր ու հալածանք սկսեց նաև Հ. Ալամդարյանի դեմ, մի մարդու, որ «պատրաստեալ էր մատուցանել զանձն ի զոհ վասն օգտի հայրենեաց և հայկազուն մանկաց»[10]։ Ըմբոստ վարդապետի ընդհարումները ցարական չինովնիկների հետ՝ Ներսիսյան դպրոցի և հայ եկեղեցու ինքնավարության հարցերի շուրջը հաճախ լարված բնույթ էին ստանում։ 1830 թ. աշնանը Էջմիածնի սինոդը, Պասկևիչի թելադրանքով, Ալամդարյանին՝ «իբր խռովարար և Ներսիսեան» աքսորեց Հաղպատ։ Այստեղ հայ կամավորական զորագնդերի կազմակերպիչը լալկան տողեր էր գրում և անիծում իր ու իր կուսակիցների ճակատագիրը[11]։ Քնարերգու բանաստեղծը երկար պիտի մնար Հաղպատի վանքում, եթե չսկսվեր լեհական ապստամբությունը և Պասկևիչը չմեկներ Կովկասից։ Աշտարակեցու հրավերով Ալամդարյանը փոխադրվեց Բեսարաբիա և նշանակվեց Սուրբ Խաչ վանքի վանահայր, որտեղ և մահացավ 1834 թ.։

Հայ գործիչները ոչ միայն մեծ կարևորություն էին տալիս ամբողջական ու ամփոփ հայկական տերիտորիայի ստեղծմանը, այլև ամեն ինչ անում էին հայերի ներգաղթը հաջողությամբ և ժամանակին ավարտելու համար, քանզի գիտեին, որ ազգի համախմբմամբ է միայն հնարավոր հայկական բնաշխարհում վերականգնել ազգային ոգին և ուժ հաղորդել հայոց լեզվին։ Ի դեպ, Պասկևիչը պատերազմի հաղթական ավարտից հետո զրպարտում էր գաղթական հայերին, որ իբր նրանք Ռուսաստան են գաղթել շլացած ռուսական ոսկուց։ Բարեբախտաբար պահպանվել է գնդապետ Լազարյանի այն գրությունը, որում առարկում է Պասկևիչի այդ զրպարտությունը։ Գնդապետ Լազարյանը հայտնում է ցարական գաղութարարին, որ Անդրկովկաս գաղթելու հայերի ցանկությունից զատ՝ կառավարությունն էլ «հավելյալ շահույթ ունի», այլապես նա հազարների տեղ կոպեկներ իսկ չէր ծախսի ներգաղթի կազմակերպման համար[12]։ Ցանկանալով Ղ. Լազարյանին Կովկասից վտարելու համար հավաստի կռվաններ ունենալ, 1828 թ. սեպտեմբերի 28-ին Պասկևիչը գաղտնի շրջաբերական գրեց Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերի հրամանատար Պանկրատևին, Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավճավաձեին, ներգաղթի գծով Լազարյանի օգնական, փոխգնդապետ Մովսես Երկայնաբազուկ Արղությանին և Թեհրան մեկնող ռուսական դեսպան Ալ. Գրիբոյեդովին։ Սրանցից ամեն մեկը պետք է բնութագրեր Ղ. Լազարյանի տեղն ու դերը 40 հազար պարսկահայերի ներգաղթման գործում։ «...Հայոց մշտական զորք ժողովելու», ինչպես նաև «իր ենթադրությունների մեջ Ղարաբաղը և մյուս երկրները» մտցնելու վերաբերյալ բնու-

9 Ալ. Երիցյան, նույն տեղում, էջ 276։
10 Խ. Աբովյան, ԵԼԺ, ութերորդ հատոր, Երևան, 1958, էջ 312։
11 Տե՛ս Ալ. Երիցյան, նույն տեղում, էջ 652։
12 Տե՛ս Պոտտո, Վերածնություն Հայաստանի, 1904, էջ 21։

թղթերի մատակարարած տեղեկությունները բավական էին, որպեսզի Պասկևիչը Լազարյանին վտարեր Կովկասից: Այստեղ ուշագրավն այն է, որ նրա հետ սերտ համագործակցության մեջ գտնվող Ն. Աշտարակեցին նույնպես մեղադրվեց «պետական շահերի մասին» չմտածելու, «երկրի վարչության մեջ խառնվելու», Մակվի խանության կցումով հայկական մարզի տերիտորիան ընդարձակելու նկրտումների համար[13]:

Լազարյան գնդապետը, շարունակում է Ալ. Երիցյանը, «...ազգասիրությամբ տոգորված, Ներսեսի նման, հափշտակված էր հայրենյաց ազատության գաղափարներով»[14]: *Հարկավ, մեծանուն Լազարյանների հայրենասեր ու ազգային-քաղաքական որոշ ծրագրեր փայփայող վերջին ներկայացուցիչն էր Լազարը, որովհետև Անդրկովկասի նվաճումն ավարտվելուց հետո, երբ ցարիզմն այլևս կարիք չուներ հայ առևտրական բուրժուազիայի և հոգևորականության օժանդակությանը, բնական է, որ նրանք կզրկվեին այն ազդակներից, որոնցից սնունդ էր ստանում նրանց ինչպես քաղաքական ակտիվ դերը, այնպես էլ հայրենասիրությունը*[15]:

Հուսախաբությունը համակում էր նաև հայ մեծատունների մյուս հատվածներին:

Արևելահայաստանում տնտեսական կյանքի կայունացումը գաղթահայերի ազգային հոգեբանությունը սնում էր «ազատ» հայրենիքում անկաշկանդ գործելու պատրանքներով:

Չդիմանալով անգլիական առևտրա-արդյունաբերական մագնատների մրցակցությանը, երբեմնի տիրապետող դիրքեր գրաված հնդկահայ խոշոր առևտրականները հետզհետե նահանջում էին իրենց գրաված բարձունքներից, միանում եվրոպական առևտրական ֆիրմաներին՝ առկա կապիտալներն այնտեղ պահպանելու մտայնությամբ: Հայ առևտրական կապիտալի վիճակը առավել վատթարացավ, երբ «Անգլիան սկզբից դուրս մղեց հնդկական բամբակյա գործվածքները եվրոպական շուկաներից, ապա սկսեց Հնդկաստան ներմուծել ոլորած մանվածք ու վերջում բամբակե գործվածքների հայրենիքը ողողեց բամբակեղեն ապրանքներով»[16]: *Հնդկահայ փողատերերի առավել հեռատես մասը զգում էր կլանիչ ինտեգրացիայի վտանգը և միջոցներ որոնում փրկվելու օրհասական կործանումից: Ազատագրված Հայաստանը գործունեության այն տեղն էր, ուր տնտեսական բազա ստեղծելու և կապիտալներն աճեցնելու մեջ էին նրանք տեսնում փրկության գլխավոր միջոցը: Այսպես, 1829 թ. հոկտեմբերի 29-ին Ն. Աշտարակեցուն հասցեագրված նամակում վաղուց ի վեր Հնդկաստանի Սամարանգ քաղաքում բնակվող, մեծ կալվածների ու հարստության տեր Հովսեփ Ամիրխանյանը «տարեկան կես միլիոն ռուբլի եկամուտ դրամագլուխ կառաջարկեր..., եթե իր նախնեաց հայրենիքի ազատությունը ապահովված գիտնար»*[17]: *Նշանավոր այդ նամակում հնդկահայ մեծատունը «մեր հին հայրենիքի մեծագույն ազատչին» իր մշտական երախտագիտությունը հայտնելուց և Պարսկաստանում ու Հայաստանում իր ազգատոհմի «ազնիվ» արյան*

13 Տե՛ս Ալ. Երիցյան, նույն տեղում, մասն Ա, էջ 393:

14 Նույն տեղում, էջ 310:

15 Տե՛ս Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 138—139:

16 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, Москва, 1957, էջ 133:

17 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն 3, Երուսաղեմ, 1927, էջ 3749:

նվիրականության մասին խոսելուց հետո, ի վերջո ասպարեզ էր հանում իր հիմնական նպատակը՝ «Միով բանիվ հաղորդեցեր ինձ՝ թե Ռուսաց տերության ինչ դիտավորություն ունի մեր ազգի վիճակի մասին։ Ի վերջո՝ պարզապես խոստանում եմ ձեզ, որ մտադիր եմ, եթե միայն կարելի լինի, գնել գրամով իմ նախնեաց երկրները, այն է՝ Ղարաբաղի աշխարհը Փայտակարանով հանդերձ, կամ եթե մի որոշ հարկ տալ նրանց տիրելու համար, վասնզի հարազատ երկրների կորուստը ինձ համար վերին աստիճանի զգալի է»[18]։

Այսպես ուրեմն, եթե հայ կղերաազգայական դասի ներկայացուցիչը ջանում էր Մակուն միացնել Հայկական մարզին, ապա գաղութահայ առևտրական կապիտալի ձայնատարը՝ հնարավորության դեպքում Ղարաբաղն ու Փայտակարանը, ըստ երևույթին, դրանք ևս Արարատյան աշխարհին միակցելու և հայկական ինքնավարության շրջանակները ավելի մեծացնելու նպատակադրմամբ։ Ստանալով նամակը, Աշտարակեցին այն ուղարկեց Խ. Լազարյանին, որը ռուսերենի թարգմանելուց հետո ներկայացրեց կոմս Բենկենդորֆին։ Ռուսաստանի ներքին գործերի տնօրենը անմիջապես պատասխանեց, որ «նորին մեծությունը» Ամիրխանյանի պահանջած տեղեկություններին պատասխան կտա՝ նրա հետ անձամբ հանդիպելուց հետո[19]։ Այնուհետև պատմությունը լռում է, բայց ինչ էլ եղած լինի, մի բան պարզ է, որ Բենկենդորֆի բերանով ցարը հասկացրել էր նրան, որ Ռուսաստանի տիրապետության տակ անցած Անդրկովկասում և Հայաստանում ինքն է միայն տերն ու տնօրենը, և որ իր կայսրության մեջ պաշտոնական, ռուսական ազգային պետական մտածողությունից յուրաքանչյուր շեղում պետք է մերժվի և դեն շպրտվի։ «Ցարական կառավարությունը,— ճիշտ կերպով նկատում է պրոֆեսոր Վ. Պարսամյանը,— հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ոչ «անկախ», ոչ «ավտոնոմ» Հայաստան և ոչ Ռուսաստանի հարավում «բուֆերային մի պետություն ստեղծելու նպատակը։ Նա բոլորովին էլ մտադիր չէր իր հսկա պետության մեջ նոր պետություն ստեղծել, այն էլ օտարազգի։ Դա հակասում էր նրա պետական սիստեմին, նրա դասակարգային և ազգային քաղաքականության ոգուն»[20]։

Որենց ոգևորության շրջանում հայ գործիչները չկարողացան ըմբռնել, որ 1828 թ. մի թիվ է, որի հետ շատ հույսեր չպիտի կապել։ Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին, հարկավ, պատմական առաջադիմական իրողություն էր։ Այս գնահատականի մեջ ժամանակի հայ գործիչները համերաշխ էին։ Ռուսական կայսրության սահմաններում Հայաստանը ֆիզիկապես ու տնտեսապես ապահով, լուսավորված տեսնելու Թաղիադյանի և Աբովյանի ռոմանտիկան, Ն. Աշտարակեցու և Ալամդարյանի, Հ. Ամիրխանյանի ու Ղ. Լազարյանի ազգային-քաղաքական պատրանքները ունեին պատմական իրենց որոշ արդարացումը, քանի որ մահմեդական աշխարհի դարավոր անշարժության մեջ հայ ժողովուրդը ի վիճակի չէր համախմբել իր ուժերը, նոր ուղիներ հարթելու համար՝ կազմակերպվել քաղաքականապես։

---

18 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսություն և Կովկասի Հայք XIX դարում, մասն երկրորդ, 1895, էջ 510։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 511։

20 Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 138—139։

Գործունեության առաջին շրջանում Խ. Աբովյանն ու Մ. Բաղիշայանը Ռուսաստանն ընկալում էին իբրև մի ամբողջություն՝ ռուս ժողովուրդ, ռուս զինվոր, ռուս կառավարիչ։ Աբովյանը, օրինակ, ռուսական տիրապետության մեղրամիսի շրջանում, դովարանում էր, ներբողում ցարական օրենքները, ռուս չինովնիկների գործելակերպը[21]։ Պարսկա-թուրքական լծից ազատված ժողովուրդը և նրա դրողը տակավին զմայլանքի մեջ էին։ «Խնդամիտ զգացմունք երախտագետ հայկազին յաղատութիւն հայրենեաց իւրոց» բանաստեղծության մեջ նա գովեստի խոսքեր էր ձոնում Հայաստանն ազատագրող «Մեծ ինքնակալ»-ին՝ «ողորմած կայսեր Նիկողայոսին»[22]։ Հեղինակը «Ո՜հ, դար երջանիկ», «Ո՜հ, չքնաղ գարուն» որակումներ էր տալիս իր հայրենիքի համար սկիզբ առած նոր ժամանակին։ Հրաշք թվացող նոր կյանքը ուրախությամբ էր համակել անգամ հայրենիքի վշտերով գերեզման մտած անցյալի մեծ զավակների հոգիները[23]։

«Յաղատութիւն սրբոյ էջմիածնի» և «Առ կայսրն ռուսաց Նիկողայոս Ա.» ոտանավորներում Սերովբե Պատկանյանը (1770—1836 թթ.) արտահայտում էր պարսկական լծից Հայաստանի ազատագրության այն մեծ ցնծությունը, որ ապրել են պատմական մեծ իրադարձության ժամանակակիցները[24]։

Ժամանակի հայ գործիչների համար ռուս-պարսկական պատերազմի առաջ բերած հետևանքները նման չէին նախընթաց դարերի ավերածություններին։ Ռուսական ինքնակալը, նրա զեներալներն ու բանակները ազատություն էին բերում Հայաստանին, նրա ժողովրդին։ «Իսկ այժմ,— գրում էր Մանվել վարդապետ Կյումուշխանեցին,— մինչ այցելութեամբ վերին, և բազմայաղթ ինքնակալին ամենայն Ռուսաստանեաց Նիկոլայ Պաւլովիչին, ազատութիւն ժամանեալ հայրենեացն մերոց՝ խոհական կառաւարութեամբ և քաջ սպարապետութեամբ պայծառափայլ Երևանու Ղրաֆ Իւան Ֆէոտորիչ Պասկևիչին...»[25]։ Հեղինակը գոհ էր, որ «Եղև ականատես հրաշալի աւերակութեանց քաղաքին և պարսպացն»[26]։

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միակցման առաջադիմական նոր էտապից բխող և հայերին համակած ազատագրական հուժկու պաթոսը հայ ժամանակակիցները ապրեցին ամբողջությամբ, սակայն հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի գաղութային քաղաքականությունը դուրս չմնաց նրանց մի մասի տեսադաշտից։ Տակավին դորպատյան տարիներին Աբովյանի գրած հայրենասիրական պոեզիայից դժվար չէ նկատել, որ նրա հեղինակին հանգիստ չէր տալիս օտար պետությունների բռնությանը ենթարկված, ինքնուրույն պետականությունից զրկված և այդ պատճառով աշխարհով մեկ սփռված իր ժողովրդի աննախանձելի կացությունը[27]։ Անդրկովկասից պոկված Աբովյանին այլևս չէր ամոթում իր հայրենիքի բարվոք վիճակը։ Ռուսական տիրապետության մասին վաղեմի պատկերացումները մոլորության էին հանգում, հարկավոր էր անցած

21 Տե՛ս Խ. Աբովյան, Երկ, ութերորդ հատոր, Երևան, 1958, էջ 154։

22 Խ. Աբովյան, Երկ, առաջին հատոր, Երևան, 1948, էջ 22։

23 Նույն տեղում, էջ 61։

24 Տե՛ս «Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան ի լոյս ընծաեալ աշխատասիրութեամբ Աւետիքայ Խաչիկեանց», ի Մոսկուա, 1857։

25 Պատմութիւն անցից անցելոյ Սեվանայ վանուց, արարեալ Մանուէլ վարդապետի Կիւմիշխանեցւոյ ի 1830 ամի ի Սեվան, 1871, Վաղարշապատ, էջ 2։

26 Նույն տեղում, էջ 3։

27 Տե՛ս Խ. Աբովյան, Երկ, առաջին հատոր, Երևան, 1948, էջ 69։

ժամանակաշրջանի և կատարված գեպքերի հաշվառմամբ վերանայել հին պատկերացումները։ Իր բանաստեղծություններից մեկում Աբովյանը նախանձում էր «դառնագետ» գերությունից ազատ, Դորպատի գերմանացի ուսանող երիտասարդությանը.

«Երգեցեք, ասեմ երջանիկ որդիք ազատ ընության,
Օրհնեցեք գպատճառն՝ որ ստեղծ զձեզ ի խաղաղ երկիր,
Ուր չիք գերութիւն, ոչ սուր կամ հարուած դառնագետ կրի,
Որով անողորմ, ազգն իմ խղճալի տանջի յաւիտեան...»[28]։

Քայլ առ քայլ նա մերձենում էր տարիներ անց իր համար բյուրեղացած այն ճշմարտությանը, որ Թուրքմենչայի պայմանագիրը ծանր և անհուսալի հիվանդի ցավերը մասնակիորեն մեղմող դեղատոմս էր միայն։ Աբովյանի համար պարզ էր դառնում, որ Պարսկաստանում տառապող քրիստոնյա հպատակների համար ազատություն նվաճելը երբեք չէր մտել սեփական ժողովրդի ազատություն ոտնահարող ցարական Ռուսաստանի հաշիվների մեջ։

Միայն կանխակալ միտումով «անհետևողականություն» որոնողները կարող են շրջանցել ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը քննադատող Աբովյանի հատկապես 40-ական թվականների ստեղծագործությունները ընդհանրացնելով նրա զարգացման առանձին շրջանները հատկանշող իրողությունները տարածելով «մանկական թոթովանքների» տրամադրությունը նրա հետագա բոլոր ստեղծագործությունների վրա։ «Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթանակով վերակենդանացված իմ հայրենիքի ազատագրության օրերին ում հոգին կարող էր այնքան կենդանի խանդավառված լինել այդ երջանկության հրճվանքով, եթե ոչ՝ իմը։ Եվ այսօր էլ պահվում են ինձ մոտ իրրև սրբություն իմ այն ժամանակվա մանկական թոթովանքները»[29],— գրում էր Խ. Աբովյանը 1842 թ.։

Եթե 20-ական թվականներին Աբովյան բանաստեղծը իր երախտապարտ ժողովրդի անսահման սերն էր երգում ցարին ու նրա գեներալներին, ապա «Վերք Հայաստանի»-ն գրելու նախօրեին նա տեսնում էր, թե ինչպես «խաչապաշտ» ցարիզմը «... մեր խեղճ ազգի հետն ընկած ման ա գալիս որ արինը ծծի և հոգին հանի»[30]։ Ճիշտ է, այլևս չկային պարսկա-թուրքական վայրագությունները, չէին հափշտակում և առևանգում, գեղեցիկ աղջիկներին բռնությամբ չէին քաշում խաների հարեմները, բայց միայն այս չէր այն ակնկալությունների համագումարը, որ փայփայել էին հայերը։

Եթե մահմեդական տիրապետության դժոխքը Աբովյանի գրչին տալիս էր հակապարսկական միտվածություն, ապա ցարական գաղութակալությունը նրա առջև բացում էր նոր հակասություններ, որոնք այլևս չէին արդարացնում գրողի երբևմնի ռոմանտիկան ու հավատը։ Նա բողոքում էր այն բանի դեմ, որ ցարիզմը ոտնահարում էր հայ ժողովրդի ազգային ինքնասիրությունն ու ակնկալությունները, հալածանք էր սկսել նույնիսկ ազգապահպանման ավանդական ազդակների դեմ։ «Տեսնում էի,—«Վերք»-ի առաջաբանում գրում էր Խ. Աբովյանը,— որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում։

28 Տե՛ս Խ. Աբովյան, Երկ, առաջին հատոր, Երևան, 1948, էջ 78։
29 Նույն տեղում, էջ 258։
30 Խ. Աբովյան, Երկ, երկրորդ հատոր, Երևան, 1948, էջ 85։

Մեկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք վայն եկել ա մեր օրին։ Հայոց լեզուն առաջս փոխչում էր Կրեսոսի նման...»[31]։ Աբովյանը սրտի էր խոցում ցարիզմի տիրապետության շնորհներով արբեցած այն «հաստափոր» հայազգիների մարմինները, որոնք արտոնյալ գերբեր, աստղիկ պաշտոններ ձեռք բերելու համար պատրաստ էին գնալ ցանկացած ստորության։ «Աստուծով հինգ տարուցը եդր էլ ոչ հայ կտեսնես, ոչ հայի անուն կլսես, կորչին, դրանց քոքն էլ կտրվի, հայի անումը՝ որ վրես չէր ելել, ես գիտեմ՝ թե ինչ տեղ կճարեի, ինչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կճարեի»[32]։

Մեծ գրողը ռուսական տիրապետության դրական հետևանքները մի կողմ չէր վանում։ Նա գիտակցում էր, որ Ռուսաստանի շնորհիվ հայ ժողովրդի երևրան մակույկը փրկվել էր մահմեդական ծովի մեջ անլուր կորչելու ահավոր վտանգից։ Սակայն այդ վտանգի վերացումը տակավին չէր բուժում Աբովյանին մտահոգող վերքը։ «...Հայոց պատմության խոր անցյալից նյութ վերցնելով,— գրում է Աբովյանի պատմագիտական հայացքների ուսումնասիրող Վ. Ղազարյանը,— նա հնարավորություն չէր ունենա ռուսական զենքի հաղթանակի գործում հայերի մատուցած ծառայությունները որպես շոնդալից ապտակ խփելու ցարական գաղութարարների երեսին, նրանց հիշեցնելու, որ հայ ժողովուրդը իր հույսերի մեջ խաբված է, որովհետև նրա այսօրը այն չէ, ինչ նա ակնկալում էր պատերազմի օրերին»[33]։ Աբովյանի «Վերք»-ը իր հայրենակիցների աչքերը բացելու, նրանց երբեմնի ակնկալությունները իրոբյա կացությանը հակադրելուն էր հետամուտ, և եթե անցյալին հավատարիմ պատմավիպասանը իր ժողովրդի երախտագիտությունն էր հայտնում ռուս մեծ ժողովրդին — այդ չէր հարկադրում նրան մոռացության տալ իր ժողովրդի ազգային-քաղաքական նպատակադրումները։

Ցարիզմի գաղութային քաղաքականության նկատմամբ Աբովյանի քննադատական դիրքավորումն ավելի ուժգին հնչեց նրա կյանքի հատկապես վերջին հնգամյակում։ 1847 թ. Ն. Աշտարակեցուն գրած նամակում խոսելով հայ ժողովրդի իրավազրկության մասին, Աբովյանը գրում էր, որ չի կարելի աննկատ անցնել այն ամենի կողքով, որոնց մասին քարերն էլ են աղաղակում, չի կարելի սրտում թաքցնել այն տանջող ցավը, որն զգում է ամեն մի հայրենասեր։ «Ինչու են խաբում մեզ,— շարունակում է հեղինակը,— Կովկասի կեղծավոր լրագրերը. թե մեր ազգը փառքի ու բարեբախտության մեջ է, որ ճըշմարտության օդային շինդ է միայն»[34]։ Հայտնի է, որ Անդրկովկասի տնտեսական նվաճման ուղղությամբ դաժան միջոցառումներ կիրառելուն զուգընթաց, ցարիզմը ուժեղացնում էր ռուսացման քաղաքականությունը, օրավուր սեղմում ազգային-կրթական գործի շրջանակները։ Ցարիզմի քաղաքականության հիշյալ կողմերը նկատի ուներ Աբովյանը, երբ գրում էր՝ «...Ռուսաց տերության խնամքի թևերի տակ անտարկությունը և անկարգությունները կեղեքում են ամեն մի տեսնող անցավորի անմեղ սիրտը»[35]։

---

31 Խ. Աբովյան, ԵԼԺ, երրորդ հատոր, Երևան, 1948, էջ 5։

32 Նույն տեղում, էջ 237։

33 Վ. Ղազարյան, «Վերք Հայաստանի»-ի գաղափարական բովանդակության մի քանի հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, 1, էջ 145։

34 Խ. Աբովյան, ԵԼԺ, տասներորդ հատոր, Երևան, 1961, էջ 295։

35 Նույն տեղում, էջ 296։

Ցարական ինքնակալության կողմից Հայաստանում իրագործվող միջոցառումները Աբովյանը միանգամայն անբավարար էր համարում երկրի արտադրողական ուժերի հետագա աճի, բնակչության մշակույթի զարգացման և ժողովրդի բարեկեցության բարձրացման համար։

Ցարական բանակների օգնությամբ պարսկական լծից ազատագրված հայ ժողովուրդը և նրա գործիչները մեծ սպասելիքներ ունեին Ռուսաստանից, մինչդեռ «Բարերար Ռուսաստանը,— հեգնում էր հեղինակը,— ժողովուրդների ցանկության և սովորույթներին հակառակ ոչ մի բան չի կամենում ձեռնարկել։ Միապետություն, խաղաղություն, և կրոնի և ազգային,— թեև հնացած, քարացած,— սովորությունների և ապրելակերպի ազատություն, ահա Ռուսաստանի հայրական միջոցառումներն ու որոշումները»[36]։ Կամ՝ «...Ավագ ուսուցիչ Ֆիլադելֆինը դեռ համարձակվեց արտահայտվել ահա թե ինչպես. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք դրանց կենդանացնել ու ամրապնդել»[37]։

Ցարիզմի հայկական քաղաքականության արդյունքներից յուրովի անբավականություն էր հայտնում նաև Մ. Թաղիադյանը։ «Կէս գարուց և այսր,— գրում էր նա «Ազգասէր Արարատեան»-ում,— բովանդակ ազգ հայոց զոգ ծերունին Սիմէօնանայր սիրայրեաց փափագանօք տեսանել զսերսես իւր աթոռ սրբոյ Լուսաւորչին հաւատացեալ՝ թէ համանգամայն ծաղկեր ազգն ամենաշառաւիղ գիտութեամբ՝ և աշխարհն պայծառանայր արուեստիք քաղաքականութեամբ։ Եկն էհաս փափագանաց իւրոց. բայց դեռ ազգն փափագի հասնել իւրոցն և դեռ ոչ էհաս փափագանաց իւրոցն և դեռ ոչ էհաս»[38]։

Այսպիսով, հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների երկարատև ուղին վերջում հանգեց Արևելյան Հայաստանի միակցմանը Ռուսաստանին, դա ոչ XVIII դ. հայ ազատագրական շարժման ղեկավարների ակնկալած անկախությունն էր և ոչ էլ միակցման շրջանի հայ գործիչների փափագած ինքնավարությունը։ Երբ ցարական ինքնակալության վարչական, հասարակական-քաղաքական հիմնարկները դուրս եկան ցարի, նրա դիվանագետ գեներալների՝ փայլուն խոստումների դառն հիասթափություն բերող մի ծաղրանկար, ժամանակակիցներին այդ պահ միայն ակներև դարձավ, որ ցարիզմի խոստացած հայկական անկախությունը կամ ինքնավարությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռուսական ինքնակալի բացարձակ իշխանությունը։ Հայ ժողովրդի դարավոր երազանքը վերածվեց ռուսական կայսրության մի անկյունում անձի ու գույքի ապահովությամբ ապրելու երաշխիքի։ Հնից նորին անցնելու ժամանակաշրջանը երկակի հայացքի տակ դրեց հայ գործիչների հասարակական-քաղաքական միտքը. նրանք որոշակիորեն արտահայտեցին պատմական բեկմանը յուրահատուկ հասարակական խավերի ձգտումներն ու տրամադրությունները։ Կատարված դեպքերի էությունը հասու դառնալուց հետո, հայ գործիչների մի խումբն ընտրեց նոր կարգերի հետ հաշտվելու ուղին։ Այդ խմբի ամենանշանավոր դեմքը՝ Ն. Աշտարակեցին հետագայում ոչ միայն համակերպվեց ցարական ռեակցիայի բնթացքին, այլև փորձեց հայ կյանքի հնարավոր հեղաբեկումը կանխել պետա-

36 Տե՛ս Խ. Աբովյան, Երկ, յոթերորդ հատոր, Երևան, 1956, էջ 183։
37 Նույն տեղում, էջ 196։
38 «Ազգասէր Արարատեան», 1849, էջ 226։

կան պաշտոնյայի բարեխոսությամբ և իշխանության դաժանությունը բողոքողի ցավագին թախանձանքներով։

Ստեղծված նոր իրադրության հանդեպ այլ դիրքորոշում ունեցան լուսավորիչ-դեմոկրատները (Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան)։ Աշտարակեցուց ոչ պակաս, 20-ական թվականներին, սրանք ևս խանդավառված էին Հայաստանում ռուսական տիրապետության հաստատմամբ և ձոներ ու ներբողներ էին գրում այդ առիթով։ Երևանական թվականները դարձան իդեալի և իրականության տարանջատման տարիներ։ Ցարական կառավարությունը Անդրկովկաս և Հայաստան փոխադրեց ռուսական ֆեոդալա-ճորտատիրական իրականության հոռի կողմերը։ Աբովյանը եկավ այն համոզման, որ ցարիզմը ոչ թե ազատագրել, այլ «...նվաճել է Հայաստանը»[39], իսկ ազատագրական խոստումները նրա գաղութային քաղաքականության նպատակների կենսագործման համար լոկ նախերգանք են ծառայել։ Քննադատելով ցարիզմի քաղաքականությունը, Թաղիադյանը և Աբովյանը բարձր էին գնահատում հայ հայրենիքի մի հատվածի Ռուսաստանին միակցման առաջադիմական նշանակությունը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ հայ ժողովուրդը ազատվել էր ֆիզիկապես խեղխեղման ենթարկվելու հնարավոր վտանգից ու արևելյան ֆեոդալիզմին ներհատուկ աղետներից, այլև այն տեսակետից, որ Արևելյան Հայաստանը դառնում էր ազգահավաքման մի օջախ։ Հիրավի, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միակցմամբ նախապայմաններ ստեղծվեց հայերի ազգային կոնսոլիդացման համար, սակայն պատմական այդ իրողությամբ միայն ըսկըսվեց, բայց չավարտվեց այդ գործընթացը, որչափ ցարիզմի գաղութային քաղաքականությունը Անդրկովկասում բազմաթիվ խոչընդոտներ էր ստեղծում երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացման, անցյալի ֆեոդալական մնացուկների վերացման, ժողովրդական զանգվածների հետամնացության լիկվիդացման առաջ և ճնշում նրանց հասարակական-քաղաքական զարթոնքի ջանքերը։

---

39 Խ. Աբովյան, Եվ, յոթերորդ հատոր, Երևան, 1956, էջ 169։